



«Գաղտնիք չէ՝ Հայաստանը ու նաեւ հայութիւնն, առհասարակ, ապրում են համակարգային ճգնաժամ, որն ընդգրկում է քաղաքական, տնտեսական, մշակութային, բարոյական, գաղափարախօսական, սոցիալ-հոգեբանական ոլորտներ: Այս ճգնաժամից դուրս գալու, ամուր պետութիւն կառուցելու համար Հայաստանին երկարատեւ ժամանակշրջան տրուած չէ. այդ հնարատրութիւնն առկայ է լինելու ընդամէնը եւս մի քանի տարի, առաւելագոյնը մէկ տասնամեակ...»:
(Դոկտ. Արմէն Այվազեան, «Հիմնատարրեր Հայաստանի Ազգային Անվտանգութեան Հայեցակարգի», Երեւան 2003)

Պիտի ուզէի ստորագրել այսպիսի տողերու տակ: Մէկ շունչով կարդացի նշեալ գիրքը և համացանցային կապի մէջ մտայ հեղինակին հետ, փնտռեցի իր հրատարակութիւնները ու գտա՞ծ «լափեցի»: Իսկ բոլորովին վերջերս առիթը ունեցայ կարճ հանդիպում մը ունենալ՝ սրտցաւ, խորապէս վերլուծող, պահանջկոտ և հայ ժողովուրդի հանդէպ հաւատքով լեցուած Դոկտ. Արմէն Այվազեանի հետ՝ Կլէնտելի Brandview Collection-ի մէջ:

Դոկտ. Արմէն Այվազեան Մատենադարանի Աւագ Գիտաշխատող է, դասախօս՝ Հայաստանի Գիտութիւններու Կաճարի Կառավարման բաժանմունքի, Հայաստանի Ամերիկեան Համալսարանի և Երեւանի Պետական Համալսարանի դասախօս: 1992-1994 Հայաստանի Հանրապետութեան Նախագահի օգնական, Արտգործնախարարութեան խորհրդական, Եւրոպայի Անվտանգութեան և Համագործակցութեան Խորհրդակցութեան մէջ (OSCE) Հայաստանի Պատուիրակութեան գործող ղեկավար: Մինչեւ օրս հեղինակ է ինը գիրքերու, 2006-էն ի վեր ունի նաեւ իր պաշտօնական կայքը՝ հայերէն, անգլերէն և ռուսերէն լեզուներով, Ararat Center for Strategic Research:

Վերջերս, 11 Ապրիլին, կատարուեցաւ Դոկտ. Ա. Այվազեանի «Հայկական Ինքնութեան Հիմնաքարերը» աշխատութեան գինեձօնը: Երեւանի «Արարատ» Ռազմավարագիտական Կենտրոնի (տնօրէն Ա. Այվազեան) կողմէ հրատարակուած նշեալ աշխատութիւնը ձեռով մը օրկանական և տրամաբանական շարունակութիւնն է նախորդ հրատարակութիւններու, որտեղ կարմիր թելի պէս կ'անցնի Հայաստանի և հայ ժողովուրդի համար ազգային անվտանգութեան գերխնդիրի քննարկումը, վերլուծումը և միջոցներու փնտռութիւնը: Նպատակը յստակ է՝ հետապնդել այն ոլորտները, որոնք թոյլ են զարգացած, ինչպէս օրինակ «տեղեկատուութեան պատերազմը»:

Նշեալ աշխատութիւնը ժողովածու մըն է, ուր Հայաստանի ներկայ այն մասնագէտներէն ոմանք, որոնք առնչուած են Հայաստանի ռազմավարական ոլորտի խնդիրներով, իրենց մենագրութիւններուն մէջ կը վերլուծեն զանազան հարցեր, կացութիւններ, սահմանային խնդիրներ, փոխզիջումային հարցեր, երբ հայ ժողովուրդը, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, և հայրենի պետութիւնը յատկապէս պէտք է շատ զգօն ըլլան, ճիշդ գնահատեն շրջանային զարգացումներն ու համաշխարհային ալեկոծումները, որպէսզի ապահովուի հայ ժողովուրդի ազգային անվտանգութիւնը:

Դոկտ. Ա. Այվազեանի համար հայոց պատմութիւնը լաւագոյն և ամէնէն հարազատ դաստիարակութեան աղբիւրն է: Հոն կարելի է գտնել այսօրուան համար ուսանելի և կիրարկելի այնպիսի դրոյթներ, որոնց փոխանցումը նոր սերունդներուն, և յատկապէս ռազմական ոլորտի հետ առնչուող ուժերուն, ա՛յլ

աւելի մարտունակ ու արդիւնաւէտ կը դարձնէ անվտանգութեան ապահովումը 40.000 քառ. քմ. տարածութեան վրայ:

ԲԱՆԱԿԸ: Ահաւասիկ այն դաշտը, ուր մեծ գործ կայ կատարուելիք բարոյա-հոգեբանական կորովի զօրացման առումով: Ձէնքն ու զինամթերքը, գերարդիական սարքերն ու կազմածները իրենց տեղը ունին, բայց բանակին բարոյական կորովը, պատուով ծառայելու և ի հարկին ռազմի դաշտին վրայ յաւերժանալու գիտակցութիւնը՝ բանակը կը դարձնէ ամենէն աւելի վստահելի կառոյցը: Այդպէս եղած է անցեալին և այդպէս ալ աւանդուած է մեզի մեր պատմիչներուն կողմէ:

Ըստ Դոկտ. Ա. Այվազեանի բանակը եղած է ամենաեռանդուն շատագովը Հայաստանի անկախութեան: Չի կարելի չմահաձայնիլ այս հաստատման հետ: Արդարեւ, ինչպէս մեզմէ շատեր կը յիշեն հայոց պատմութեան դասերէն, Մուշեղ, Մանուէլ, Վարդան, Վահան Մամիկոնեանները, Գէորգ և Գոռ Մարգալետունիները, Լեւոնի որդի Թորոս Իշխանը Կիլիկիոյ, Չաքարէ և Իվանէ Չաքարեանները, Դաւիթ Բեկը և ուրիշներ լոկ հայրենիքի գոյութիւնը պաշտպանելու համար չեն կռուած, այլ վերականգնելու հայրենի անկախ պետականութիւնը (ընդգծումը մերն է - Մ. Գ.):

Ներկանկը բազմաթիւ փաստերու հիման վրայ, առնուած Փաստոս Բիւզանդէն ու Խորենացիէն, ցոյց կու տայ թէ ինչպէս հայկական բանակը ունեցած է զինուորական գաղափարախօսութիւն, սկզբունքներ և վարքականոններ (disciplines), որոնց վերջնական նպատակն էր պաշտպանել ու եթէ պէտք է՝ գոհովիլ հայ թագաւորին, սեփական ընտանիքին, մերձատրոններուն (տոհմին) ու ազգին համար: Զինուորական այս վարքականոնները եթէ հայութեան մէջ յստակ ձեւակերպում ստացեր էին 4-րդ դարուն, ապա Երոպայի մէջ այդ գործընթացը կը սկսեր 17-18-րդ դարերուն...

Գիրքին ներկայացման ընթացքին հեղինակը հակիրճ կերպով անդրադարձաւ նաեւ հրատարակութեան մէջ զետեղուած այլ կարեւոր ու այժմեական ուսումնասիրութիւններու, ինչպէս Հայաստանի և ազատագրուած տարածքներու ռազմավարական կարեւորութեան, տեղեկատուութեան խիստ էական դաշտին մէջ տիրապետող դառնալու անհրաժեշտութեան և այլն:

Դոկտ. Ա. Այվազեանի հետ չի կարելի չհամաձայնիլ, երբ խօսելով Զօրավար Արկադի Տէր Թադեոսեանի աշխատութեան մասին, ուր արցախցի զինուորականը կը գտնէ թէ աւելի հեշտ է ու արդիւնաւէտ, մարդկային և զինուժի տեսակէտէն, պաշտպանել ներկայ սահմաններու մէջ գտնուող հայկական հողատարածքները. ահա թէ ինչու այլեւս տեղ չկայ հայերու կողմէ նոր փոխգիշումներու երթալու, իսկ երբ քարոզչական դաշտին մէջ հայերը կը ներկայացուին որպէս հարեւան հանրապետութենէն հողեր կցած կողմ, մենք անմիջապէս պատրաստ պէտք է ըլլանք որպէս հակադարձութիւն հրապարակ նետել այն փաստը, որ այսօր Պատմական Հայաստանի հողերուն մեծագոյն մասերը գրաւուած են Թուրքիոյ և Ատրայէձանի կողմէ:

Գանք հիմա համացանցի անհրաժեշտութեան և թէ ինչպէս մենք կ'օգտուինք անոր անսպառ ու արդիւնաւէտ հնարաւորութենէն: Ահաւասիկ բնագաւառ մը, որ նմանապէս դարձաւ Դոկտ. Ա. Այվազեանի խորհրդածութիւններուն առարկան:

Համացանցը այսօր դարձած է տեղեկատուութեան մեծագոյն դաշտը: Միշտ ալ մեր հայկական կազմակերպութիւններու մէջ հարց եղած է թէ որքանով քայլ կը պահենք համացանցի ընձեռած հնարաւորութիւններուն հետ և միշտ ալ գտած ենք թէ բաւական ետ կը մնանք այդ դաշտին մէջ: Թուրքեր ու ազերիներ, անշուշտ պետական աւելի մեծ հնարաւորութիւններու շնորհիւ, մեզմէ շատ առաջ անցած ենք: Ասիկա լուրջ թերացում մըն է, գոր պէտք է շուտափոյթ կերպով վերացնել: Միանգամայն ճիշդ է Դոկտ. Ա. Այվազեան, երբ կը յիշեցնէ թէ «այսօր պատերազմը տեղափոխուած է տեղեկատուութեան դաշտ»: Ի հարկէ

անհատապէս շատ մը հայեր մեծ ջանքեր կը կատարեն հակադարձելու համար մեր հակառակորդին պետական հովանաւորութիւն վայելող արշաւին, բայց այս բնագաւառը լուրջ խնդիր մըն է, որ կը կարօտի մեր հայրենի պատկան մարմիններու ուշադրութեան՝ որքան շուտ, այնքան լաւ. արդէն բաւական ետ ենք մնացեր:

Ազգային անվտանգութեան ծիրին մէջ կարեւոր է նաեւ ունենալ համացանցի միջոցով հաղորդակցութեան մէկ լեզու: Որքան ցաւալի է տեսնել թէ «հայերէնը մեռած է internet-ին» մէջ: Հայերէն գրել կարդացող հայեր դժբախտաբար կամ լատինատառութեամբ կամ օտար լեզուով կը հաղորդակցին իրարու հետ: Ասիկա անառողջ ու հայերէնին լուրջ հարուած հասցնող պարագայ մըն է: Ըստ Դոկտ. Ա. Այվազեանի անլուծելի խնդիր մը չէ ասիկա, այլ կարելի է նիպական ոչ-մեծ ներդրումով հարթել նշեալ անհեթեթութիւնը:

Վերջացնելով, «Արարատ» Ռազմավարագիտական Կենտրոնին ու անոր քաջակորով տնօրէնին պէտք է թիկունք կենալ ամէն իմաստով՝ նիպապէս թէ բարոյապէս: Պետութիւններ միլիոնաւոր տոլարներ կը ծախսեն նման հաստատութիւններու վրայ կամ կը վարձեն նման հաստատութիւններ իրենց պէտք եղած տեղեկութիւններն ու վերլուծումները քաղելու համար, որովհետեւ անոնք անհրաժեշտ կը նկատեն լաւ ճանչնալ և ուսումնասիրել ռազմադաշտերն ու անոնց տեղանքը՝ յառաջիկայ պատերազմներուն յաղթական դուրս գալու համար:

Դոկտ. Մինաս Գոճայեան
ՌԱԿ «ՆՈՐ ՕՐ» շաբաթաթերթ
21 Ապրիլ 2007, Լոս Անճելըս